Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-558-10.04.2023-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները, սահմանում կամավոր աշխատանքի հետ կապված սկզբունքները, կամավոր աշխատանքի սուբյեկտները, նրանց հիմնական նպատակները, իրավունքներն ու պարտականությունները, կամավոր աշխատանքի հետ կապված ծախսերի վճարման, ինչպես նաեւ կամավոր աշխատանքի կատարման իրավական հիմքերն ու այլ առանձնահատկությունները:

Հոդված 2. Կամավոր աշխատանքի մասին օրենսդրությունը

1. Կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, այլ օրենքներով եւ իրավական ակտերով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Հոդված 3. Օրենքում գործածվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում գործածվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

1) **կամավոր աշխատանք՝** կամավորության վրա հիմնված, հանրօգուտ, անվարձահատույց, ոչ պարտադիր կամ ոչ հարկադիր, սույն օրենքին համապատասխան կատարվող աշխատանք.

2) **կամավոր՝** սույն մասի 5-րդ կետով սահմանված պայմանագրով կամավոր աշխատանք կատարող Հայաստանի Հանրապետության քաղաքացի, օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ.

3) **Կազմակերպություն՝** սույն օրենքի իմաստով կամավոր աշխատանքներում ներգրավելու իրավունք ունեցող հանրային իշխանության մարմին, այդ թվում՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական կամ համայնքային ոչ առեւտրային կազմակերպություն կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող այլ իրավաբանական անձ (այդ թվում՝ հասարակական կազմակերպություն, հիմնադրամ, կուսակցություն եւ այլն) կամ հիմնարկ, ինչպես նաեւ հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող՝ շահույթ ստանալու նպատակ հետապնդող իրավաբանական անձ.

4) **կամավոր աշխատանքի սուբյեկտ՝** Կազմակերպություն եւ կամավոր.

5) **կամավոր աշխատանքի մասին պայմանագիր**՝ կամավորի եւ Կազմակերպության միջեւ սույն օրենքով սահմանված կարգով կամավոր աշխատանք կատարելու մասին գրավոր համաձայնություն.

6) **կամավորական ծրագիր**՝ կամավոր աշխատանքի սուբյեկտների կողմից մշակվող կամ իրականացվող, որոշակի խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների համալիր.

7) **ակցիա**՝ մեկանգամյա կամ մշտական բնույթ չկրող միջոցառում կամ գործողությունների համալիր:

Հոդված 4. Կամավոր աշխատանքի սկզբունքները

1. Կամավոր աշխատանքի սկզբունքներն են՝

1) կամավորի կամքի ազատությունը.

2) կամավոր աշխատանքի անհատուցելիությունը.

3) կամավոր աշխատանքի սուբյեկտների իրավահավասարությունը.

4) կամավոր աշխատանքում խտրականության արգելքը.

5) մարդասիրությունը.

6) մարդու իրավունքների ու ազատությունների հարգումը.

7) ազգային, տարածաշրջանային կամ միջազգային համագործակցությունը:

Հոդված 5. Կամավոր աշխատանքի նպատակները

1. Կամավոր աշխատանքի հիմնական նպատակներն են՝

1) կրթական, գիտական, մշակութային, սոցիալական, առողջապահական, բնապահպանական եւ այլ հանրային նշանակության խնդիրների լուծմանն աջակցելը.

2) անձի՝ անկախ կյանքի հմտությունների ձեռքբերմանն ու զարգացմանը, սոցիալական ներառմանը աջակցելը.

3) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) այդ վիճակից դուրս բերելուն աջակցելը.

4) անձի մասնագիտական կողմնորոշմանը կամ կարիերայի պլանավորմանը, աշխատաշուկայում մրցունակությանն ուղղված զբաղունակության կամ առանցքային (փափուկ) հմտությունների զարգացմանն աջակցելը.

5) ոչ ֆորմալ կամ ինֆորմալ կրթությամբ նոր գիտելիքներ, կարողություններ, հմտություններ ու փորձառություն ձեռք բերելուն, ինչպես նաեւ ձեռքբերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների պահպանմանն աջակցելը.

6) «Կրթություն-աշխատաշուկա» արդյունավետ փոխառնչությանը, որակյալ աշխատուժի ձեւավորմանը կամ աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը նպաստելը, ինչպես նաեւ երիտասարդներին կամ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող այլ անձանց՝

աշխատաշուկայի միտումներին ծանոթանալուն եւ աշխատաշուկայում ինտեգրվելուն աջակցելը.

7) քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, այդ թվում՝ տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների կամ արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետեւանքների վերացման աշխատանքներին կամ փրկարարական գործողություններին կամ տուժածներին օգնություն ցուցաբերելու կամ աղետների ռիսկերի կառավարման շրջանակներում իրականացվող աշխատանքներին աջակցություն ցուցաբերելը.

8) կամավոր աշխատանքին ուղղված նախաձեռնությունները զարգացնելը կամ դրանց աջակցելը, ինչպես նաեւ կամավոր աշխատանքի մասին հանրությանն իրազեկելը կամ կամավորության մշակույթի տարածմանը նպաստելը.

9) սոցիալական պատասխանատվության կամ համերաշխության մթնոլորտի կայացմանը, ինչպես նաեւ ինքնակազմակերպվող եւ ակտիվ քաղաքացիական հասարակություն ձեւավորելուն աջակցելը.

10) հանրությանը մարդասիրական գաղափարների եւ սկզբունքների ոգով դաստիարակելը, կրթելը կամ հասարակական գործունեությանը ներգրավվելու հնարավորություն ընձեռելը կամ կամավորության սոցիալական ճանաչմանը նպաստելը.

11) անձի՝ իր գիտելիքներով, կարողություններով, հմտություններով կամ փորձառությամբ օգտակար լինելուն կամ հասարակության սոցիալ-տնտեսական կյանքին մասնակցելուն, ինչպես նաեւ մարդկային կամ սոցիալական կապիտալի ձեւավորմանը նպաստելը.

12) մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանությանը կամ դրանց մասին հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը կամ հասարակության մեջ ոչ խտրական վերաբերմունքի կամ փոխօգնության մթնոլորտի ձեւավորմանը նպաստելը.

13) պետական կամ հանրային միջոցառումների անցկացմանն աջակցելը.

14) մասնակցային կառավարման, այդ թվում՝ ընտրական գործընթացներին մասնակցության մշակույթի զարգացմանը նպաստելը:

2. Կամավոր աշխատանքը կարող է կատարվել նաեւ սույն հոդվածի 1-ին մասով չսահմանված եւ օրենքով չարգելված այլ նպատակներով:

Հոդված 6. Կամավոր աշխատանքի սահմանափակումներն ու առանձնահատկությունները

1. Հատուկ՝ նեղ մասնագիտական գիտելիքներ պահանջող բնագավառում կամավոր աշխատանք կարող է կատարվել մասնագիտական գործունեության կամ աշխատանքի համապատասխան գիտելիքների առկայության դեպքում՝ պահպանելով օրենքով նախատեսված սահմանափակումներն ու առանձնահատկությունները:

2. Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու կամավորությունը, օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով առանց վարձատրության աշխատանքները սույն օրենքի իմաստով չեն համարվում կամավոր աշխատանքներ:

3. Ընտանեկան կամ ազգակցական հարաբերությունների հիման վրա օգնություն ցուցաբերելու նպատակով կատարվող աշխատանքները սույն օրենքի իմաստով չեն համարվում կամավոր աշխատանքներ:

4. Հայաստանի Հանրապետությունում կամավոր աշխատանք կարող է կատարել տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր ոք:

5. Մինչեւ տասնչորս տարեկան անձինք կամավոր աշխատանքներում կարող են ներգրավվել ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի կամ խնամակալության եւ հոգաբարձության մարմնի, իսկ տասնչորսից մինչեւ տասնվեց տարեկան անձինք՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ:

6. Հղի կանայք, մինչեւ երեք տարեկան երեխա խնամող անձինք, ինչպես նաեւ մինչեւ տասնութ տարեկան անձինք կամավոր աշխատանքի կարող են ներգրավվել՝ Հայաստանի

Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ եւ այլ օրենքներով սահմանված սահմանափակումներին ու առանձնահատկություններին համապատասխան:

7. Եթե բժշկական եզրակացությամբ հաստատվում է, որ կամավոր աշխատանքը վտանգել է կամ կարող է վտանգել կամավորի առողջությունը, ապա Կազմակերպությունը նրան պարտավոր է տեղափոխել միայն իր առողջական վիճակին համապատասխան այլ կամավոր աշխատանքների՝ առկայության դեպքում:

8. Առանց սույն օրենքով սահմանված կարգով կնքվող կամավոր աշխատանքի մասին պայմանագրի Կազմակերպության կողմից կամավոր աշխատանքի ներգրավվելու դեպքում, Հայաստանի Հանրապետության քաղաքացին, օտարերկրյա քաղաքացին, քաղաքացիություն չունեցող անձն այդ աշխատանքի մասով չի համարվում կամավոր, իսկ տվյալ աշխատանքը Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի իմաստով համարվում է անօրինական:

9. Սույն օրենքով սահմանված կարգով կատարված կամավոր աշխատանքի ժամանակահատվածը Կազմակերպության կողմից տրամադրված տեղեկանքի կամ երաշխավորագրի հիման վրա կամավորի համար կարող է համարվել աշխատանքային փորձառություն: Կամավոր աշխատանքի մասին տեղեկանքի կամ երաշխավորագրի տրամադրման կարգը սահմանում է սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով նշված լիազոր մարմինը:

10. Աշխատանքային հարաբերությունների շրջանակներում աշխատողն իր աշխատաժամանակի ընթացքում սույն օրենքով սահմանված կարգով կամավոր աշխատանքի է ներգրավվում գործատուի հետ փոխադարձ համաձայնությամբ:

ԳԼՈՒԽ 2

ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՄԱՎՈՐԻ ՀԱՆԳՍՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱԽՍԵՐԸ

Հոդված 7. Կամավորի իրավունքները

1. Կամավորն իրավունք ունի՝

1) Կազմակերպությունից ստանալու կամավոր աշխատանքի կատարման համար անհրաժեշտ տեղեկատվություն, խորհրդատվություն կամ աջակցություն.

2) Կազմակերպության հետ փոխադարձ համաձայնությամբ մասնակցելու Կազմակերպության՝ կամավորական կամ այլ ծրագրերի մշակմանը կամ իրականացմանը.

3) սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում եւ կարգով Կազմակերպությունից ստանալու կամավոր աշխատանքի կատարման համար անհրաժեշտ միջոցներ, իր կատարած կամավոր աշխատանքից բխող լրացուցիչ ծախսերի փոխհատուցում, ինչպես նաեւ սույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում եւ կարգով ծախսերի հատուցում.

4) ստանալու վնասի հատուցում.

5) կողմերի համաձայնությամբ մասնակցելու Կազմակերպության կազմակերպած ծրագրերին եւ միջոցառումներին.

6) Կազմակերպությունից ստանալու իր կատարած կամավոր աշխատանքի մասին տեղեկանք կամ երաշխավորագիր՝ Կազմակերպությանը գրավոր դիմելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում.

7) կամավոր աշխատանքի մասին պայմանագրով նախատեսված դեպքերում եւ կարգով ունենալու կամավոր աշխատանքի հետ կապված հնարավոր ռիսկերից ապահովագրություն.

8) ունենալու սույն օրենքով կամ այլ օրենքներով սահմանված՝ կամավոր աշխատանքի հետ կապված այլ իրավունքներ:

Հոդված 8. Կամավորի պարտականությունները

1. Կամավորը պարտավոր է՝

1) չտարածել կամ չհրապարակել կամավոր աշխատանքը կատարելու ընթացքում իրեն հայտնի դարձած անձնական տվյալների կամ պետական, բանկային, ապահովագրական,

առեւտրային, բժշկական, փաստաբանական կամ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող այլ տեղեկությունները,

2) կամավոր աշխատանքը կատարել առողջության պահպանման եւ անվտանգության ապահովման վերաբերալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան,

3) հատուցել կամավոր աշխատանք կատարելիս՝ իր գործողության կամ անգործության հետեւանքով Կազմակերպությանը պատճառած նյութական վնասը,

4) նպատակային ու բարեխղճորեն օգտագործել Կազմակերպության հատկացրած գույքը եւ միջոցները,

5) մասնակցել Կազմակերպության կազմակերպած՝ իր կամավոր աշխատանքին առնչվող կրթական ծրագրերին կամ իրազեկման այլ միջոցառումներին՝ տվյալ կամավոր աշխատանքը կատարելու համար պարտադիր նախապայման լինելու դեպքում,

6) կրել սույն օրենքով կամ այլ օրենքներով սահմանված՝ կամավոր աշխատանքի հետ կապված այլ պարտականություններ:

7) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով անցնել պարտադիր բժշկական զննություն, եթե կամավոր աշխատանքը կատարվելու է այնպիսի աշխատանքներում, որոնք պահանջում են նախնական եւ պարբերական բժշկական զննություն:

Հոդված 9. Կազմակերպության իրավունքները

1. Կազմակերպությունն իրավունք ունի՝

1) մշակելու կամ իրականացնելու կամավորական ծրագրեր.

2) սույն օրենքով սահմանված կարգով ներգրավելու կամավորներ.

3) կամավորից ստանալու տեղեկատվություն՝ կատարված կամավոր աշխատանքների վերաբերյալ.

4) լուսաբանելու իր կողմից ներգրավված կամավորների կատարած կամավոր աշխատանքների արդյունքները.

5) ապահովելու կամավորի մասնակցությունն իր կողմից իրականացվող կամավորական կամ այլ ծրագրերի մշակմանը.

6) խրախուսելու կամավորին.

7) ապահովելու կամավորի մասնակցությունն իր կազմակերպած համապատասխան կրթական ծրագրերին կամ կամավոր աշխատանքին առնչվող իրազեկման այլ միջոցառումներին՝ անհրաժեշտության դեպքում այդ նպատակով համագործակցելով ուսումնական հաստատությունների հետ.

8) ունենալու սույն օրենքով կամ այլ օրենքներով սահմանված՝ կամավորներ ներգրավելու հետ կապված այլ իրավունքներ:

Հոդված 10. Կազմակերպության պարտականությունները

1. Կազմակերպությունը պարտավոր է՝

1) մինչեւ կամավոր ներգրավելը կնքել կամավոր աշխատանքի մասին պայմանագիր սույն օրենքով սահմանված կարգով,

2) կամավորին տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն կամ աջակցություն, ինչպես նաեւ նրա կամավոր աշխատանքին առնչվող տեղեկատվություն,

3) կամավոր աշխատանքի մասին պայմանագիր կնքելուց առաջ պահանջել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող համապատասխան լիցենզիա կամ կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին փաստաթուղթ, եթե կամավոր աշխատանքը կատարվելու է սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հատուկ (նեղ մասնագիտական) գիտելիքներ պահանջող բնագավառում,

4) գրավոր դիմելուց 5 աշխատանքային օրվա ընթացքում կամավորին տրամադրել տեղեկանք կամ երաշխավորագիր կատարված կամավոր աշխատանքի մասին,

5) տրամադրել կամավոր աշխատանքի կատարման համար անհրաժեշտ միջոցներ, փոխհատուցել կամավոր աշխատանքի ընթացքում կամավորի կատարած լրացուցիչ ծախսերը, ինչպես նաեւ սույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում վճարել ծախսերի հատուցումը,

6) ապահովել կամավոր աշխատանքի կատարման համար անհրաժեշտ, անվտանգ եւ առողջության համար անվնաս պայմաններ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգավորումներին համապատասխան,

7) հաշմանդամություն ունեցող անձին որպես կամավոր ներգրավելու պարագայում՝ ապահովել խելամիտ հարմարեցումներ,

8) մինչեւ կամավոր աշխատանքի թույլատրելը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան կամավորի հետ անցկացնել առողջության պահպանման եւ աշխատանքի անվտանգության ապահովման եւ կատարվող կամավոր աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ հրահանգավորում,

9) հատուցել կամավոր աշխատանք կատարելիս կամավորին պատճառված վնասը,

10) կազմակերպել եւ հսկել կամավորի կողմից կատարվող կամավոր աշխատանքները,

11) չտարածել կամ չհրապարակել կամավորներին կամավոր աշխատանքներում ներգրավելու ընթացքում իրեն հայտնի դարձած անձնական տվյալների կամ պետական, բանկային, ապահովագրական, առեւտրային, բժշկական, փաստաբանական կամ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող այլ տեղեկությունները,

12) կրել սույն օրենքով կամ այլ օրենքներով սահմանված՝ կամավորներ ներգրավելու հետ կապված այլ պարտականություններ:

Հոդված 11. Կամավորի հանգստի առանձնահատկությունները

1. Կամավոր աշխատանքի ընթացքում կամավորի հանգստի կամ սնվելու համար ընդմիջումները, ամենօրյա, ամենշաբաթյա, ամենամյա անընդմեջ հանգիստը սահմանվում են կողմերի համաձայնությամբ՝ առնվազն պահպանելով Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ համապատասխան աշխատանքի համար սահմանված հանգստի նվազագույն տեւողությունները:

Հոդված 12. Կամավոր աշխատանքի հետ կապված ծախսերը

1. Կամավոր աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ծախսերի իրականացման նպատակով կամավորին ֆինանսական կամ գույքային միջոցները տրամադրվում են նախապես՝ Կազմակերպության կողմից, իսկ կամավոր աշխատանքներից բխող լրացուցիչ ծախսերը փոխհատուցվում են այդ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում՝ այդ փաստաթղթերը ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան մինչեւ հաջորդ ամսվա 15-ը: Սույն մասում նշված լրացուցիչ ծախսերի փոխհատուցման առավելագույն չափը սահմանվում է նախապես՝ կողմերի գրավոր համաձայնությամբ:

2. Իր բնակության վայրից (քաղաք կամ գյուղ) դուրս կամավոր աշխատանք կատարելու դեպքում՝ Կազմակերպության կողմից կամավորին տրվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ֆինանսական կամ գույքային միջոցներից կամ կամավոր աշխատանքներից բխող լրացուցիչ ծախսերի փոխհատուցումից բացի նաեւ ծախսերի հատուցում՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգին եւ չափերին համապատասխան:

3. Սույն հոդվածով նախատեսված ֆինանսական միջոցները, հատուցումները կամ փոխհատուցումները կամավորին վճարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով՝ անկանխիկ եղանակով:

ԳԼՈՒԽ 3

ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Հոդված 13. Կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները

1. Կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները կողմերի փոխադարձ համաձայնության վրա հիմնված այն հարաբերություններն են, որոնք ծագում են կամավորի եւ Կազմակերպության միջեւ սույն օրենքով սահմանված կարգով կնքված կամավոր աշխատանքի մասին պայմանագրով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հարաբերությունները համարվում են քաղաքացիական-իրավական հարաբերություններ, իսկ կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը՝ քաղաքացիական-իրավական բնույթի պայմանագիր:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հարաբերությունները չեն համարվում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային հարաբերություններ, իսկ պայմանագիրը՝ աշխատանքային պայմանագիր:

Հոդված 14. Կամավոր աշխատանքի մասին պայմանագրի կնքման կարգը

1. Կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը կնքվում է որոշակի ժամկետով:

2. Կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը՝

1) կնքվում է գրավոր ձեւով, երկու օրինակից՝ կողմերի, իսկ մինչեւ տասնչորս տարեկան անձի հետ կնքվող պայմանագրի դեպքում՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ օրինակը Կազմակերպությունը հանձնում է կամավորին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան կամավորի դեպքում՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկին կամ խնամակալին.

2) սույն մասի 1-ին կետով սահմանված կարգով կարող է կնքվել նաեւ կողմերի էլեկտրոնային ստորագրությամբ: Էլեկտրոնային ստորագրությամբ կնքված կամավոր աշխատանքի մասին պայմանագրի մեկ օրինակը էլեկտրոնային եղանակով փոխանցվում է կամավորին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան կամավորի դեպքում՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկին կամ խնամակալին:

3. Կազմակերպությունն իր՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողի հետ չի կարող կնքել նաեւ կամավոր աշխատանքի մասին պայմանագիր նույն աշխատանքի համար:

4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը՝ օտարերկրացու հետ կամավոր աշխատանքի մասին պայմանագիր կնքելու դեպքում, սահմանվում է մուտքի վիզայի ժամկետով, եթե օտարերկրացու համար Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված մուտքի վիզա:

5. Կամավոր աշխատանքի մասին պայմանագիր կնքելը պարտադիր չէ ակցիային մասնակցելու դեպքում, ինչպես նաեւ այն դեպքերում, երբ կամավոր աշխատանքը կատարվում է ոչ Կազմակերպության միջոցով:

Հոդված 15. Կամավոր աշխատանքի մասին պայմանագրի բովանդակությունը

1. Կամավոր աշխատանքի մասին պայմանագրում նշվում են՝

1) պայմանագիրը կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը,

2) պայմանագիր կնքող Կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը,

3) կամավորի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, բնակության կամ հաշվառման հասցեն,

4) կամավորի՝ անձը հաստատող փաստաթղթի վավերապայմանները, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը,

5) կամավոր աշխատանքի անվանումը կամ գործառույթները կամ նկարագրությունը,

6) կողմերի համաձայնությամբ ապահովագրություն նախատեսվելու դեպքում՝ կամավորին՝ իր կամավոր աշխատանքի հետ կապված դժբախտ դեպքերից, մասնագիտական հիվանդություններից կամ նրա քաղաքացիական պատասխանատվությունը՝ երրորդ անձանց վնաս պատճառելու կամ այլ ռիսկի հետ կապված ապահովագրության կարգը եւ պայմանները,

7) կամավոր աշխատանքը կատարելու կարգն ու պայմանները,

8) սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված դեպքում՝ կամավոր աշխատանք կատարելու համար խելամիտ հարմարեցումների վերաբերյալ կարգավորումները, դրանց իրականացման ժամկետները,

9) պայմանագրի գործողության ժամկետը,

10) Կազմակերպության անունից պայմանագիրը ստորագրող անձի պաշտոնը, անունը, ազգանունը, կամավորի անունը, ազգանունը եւ ստորագրությունները:

2. Կամավոր աշխատանքի մասին պայմանագրում կարող են ներառվել նաեւ սույն օրենքից բխող կամ սույն օրենքին չհակասող այլ պայմաններ:

Հոդված 16. Կամավոր աշխատանքի մասին պայմանագրի պայմանների փոփոխման կամ պայմանագրի լուծման հիմքերն ու կարգը

1. Կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը լուծվում է պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում:

2. Կամավոր աշխատանքի մասին պայմանագրի պայմանները կարող են փոփոխվել կամ պայմանագիրը կարող է լուծվել նաեւ կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ առնվազն երեք աշխատանքային օր առաջ նախապես այդ մասին գրավոր տեղեկացնելով մյուս կողմին, եթե տեղեկացման այլ կարգ նախատեսված չէ կամավոր աշխատանքի մասին պայմանագրով: Սույն մասով սահմանված ծանուցման ժամկետի ավարտի օրվան հաջորդող օրվանից կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը համարվում է լուծված օրենքի ուժով:

ԳԼՈՒԽ 4

ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ՝ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Հոդված 17. Կամավոր աշխատանքի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի լիազորությունները

1. Կամավոր աշխատանքի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի՝ «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքով սահմանված լիազոր մարմնի լիազորություններն են՝

1) կամավոր աշխատանքի բնագավառի պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը.

2) կամավոր աշխատանքի բնագավառի օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակումը.

3) կամավոր աշխատանքի խթանման, ինչպես նաեւ կամավորության մշակույթի զարգացման ու տարածման վերաբերյալ առաջարկությունների, միջոցառումների մշակումը կամ իրականացման ապահովումը.

4) կամավոր աշխատանքի սուբյեկտներին տեղեկատվական, մեթոդական կամ խորհրդատվական աջակցության տրամադրումը:

Հոդված 18. Կամավոր աշխատանքի սուբյեկտների՝ կամավոր աշխատանքի հետ կապված իրավունքների պաշտպանությունը, կամավոր աշխատանքի հետ կապված վեճերի լուծումը

1. Կամավոր աշխատանքի սուբյեկտների՝ կամավոր աշխատանքի հետ կապված իրավունքների պաշտպանությունը եւ կամավոր աշխատանքի հետ կապված վեճերի լուծումն իրականացվում է դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքին համապատասխան:

ԳԼՈՒԽ 5

ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդված 19. Կամավոր աշխատանքի կազմակերպումը օտարերկրյա պետություններում կամ օտարերկրյա քաղաքացիների կամավոր աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում

1. Կազմակերպությունը՝ իր նախաձեռնությամբ կամ օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության հրավերով՝ սույն օրենքով կամ այլ օրենքով սահմանված կարգով կարող է կամավորին գործուղել օտարերկրյա պետություն՝ կամավոր աշխատանք կատարելու:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում օտարերկրյա պետությունում կամավոր աշխատանքը կարգավորվում է սույն օրենքով, այլ օրենքներով, ընդունող պետության օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով եւ կամավոր աշխատանքի մասին պայմանագրով:

3. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության տարածքում սույն օրենքով սահմանված կարգով կամավոր աշխատանք կատարելու նպատակով կարող է հրավիրել օտարերկյա քաղաքացիներ՝ սույն օրենքով կամ այլ օրենքով սահմանված կարգով:

4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում՝ սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-2-րդ մասերով սահմանված միջոցները տրամադրվում կամ ծախսերը փոխահատուցվում կամ հատուցվում են կամավոր աշխատանքի մասին պայմանագրով սահմանված կարգով՝ Կազմակերպության կամ ընդունող պետության կամ միջազգային կազմակերպության միջոցների հաշվին:

5. Մինչեւ տասնչորս տարեկան անձինք Կազմակերպության միջոցով օտարերկրյա պետությունում կամավոր աշխատանքի կարող են ներգրավվել ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի կամ խնամակալության եւ հոգաբարձության մարմնի, իսկ տասնչորսից մինչեւ տասնութ տարեկան անձինք՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ հոգաբարձուի գրավոր

համաձայնությամբ եւ պատասխանատվությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լրիվ գործունակ ճանաչված (էմանսիպացված) անձանց:

ԳԼՈՒԽ 6

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 20. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն (բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերի) ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից երեք ամիս հետո:
2. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերն ուժի մեջ են մտնում՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի 9-րդ մասից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրը:
3. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված պարտադիր բժշկական զննության պարտականությունը կամավորի համար ուժի մեջ է մտնում սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Հոդված 21. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է նաեւ Կազմակերպությունների կողմից կամավորների հետ մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը կնքված՝ կամավոր աշխատանքի վերաբերյալ պայմանագրերի, ինչպես նաեւ այդ պայմանագրերից ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը կնքված կամավոր աշխատանքի վերաբերյալ պայմանագրերում նախատեսված առավել բարենպաստ կարգավորումների:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում՝ մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը կամավորների հետ կնքված կամավոր աշխատանքի վերաբերյալ պայմանագրերի

համապատասխանեցումը սույն օրենքի պահանջներին Կազմակերպությունները պարտավոր են կատարել սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 9-րդ մասից եւ 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից՝ վեցամսյա ժամկետում:

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-558-10.04.2023-ԱՍ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները, սահմանում կամավոր աշխատանքի հետ կապված սկզբունքները, կամավոր աշխատանքի սուբյեկտները, նրանց հիմնական նպատակները, իրավունքներն ու պարտականությունները, կամավոր աշխատանքի հետ կապված ծախսերի վճարման, ինչպես նաեւ կամավոր աշխատանքի կատարման իրավական հիմքերն ու այլ առանձնահատկությունները:

Հոդված 2. Կամավոր աշխատանքի մասին օրենսդրությունը

1. Կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, այլ օրենքներով եւ իրավական ակտերով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Հոդված 3. Օրենքում գործածվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում գործածվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

1) **կամավոր աշխատանք՝** ~~սույն մասի 2-րդ կետով սահմանված անձանց կողմից~~ կամավորության վրա հիմնված, հանրօգուտ, անվարձահատույց, ոչ պարտադիր կամ ոչ հարկադիր, սույն օրենքին համապատասխան կատարվող աշխատանք.

2) **կամավոր՝** սույն մասի 5-րդ կետով սահմանված պայմանագրով կամավոր աշխատանք կատարող Հայաստանի Հանրապետության քաղաքացի, օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ.

3) **Կազմակերպություն՝** սույն օրենքի իմաստով կամավոր աշխատանքներում ներգրավելու իրավունք ունեցող հանրային իշխանության մարմին, այդ թվում՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական կամ համայնքային ոչ առեւտրային կազմակերպություն կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող այլ իրավաբանական անձ (այդ թվում՝ հասարակական կազմակերպություն, հիմնադրամ, կուսակցություն եւ այլն) ~~**կամավորին կամավոր աշխատանքներում ներգրավող կազմակերպություն (սույն օրենքի իմաստով այսուհետեւ՝ Կազմակերպություն)՝** հանրային իշխանության մարմին, այդ թվում՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ պետական կամ համայնքային ոչ առեւտրային կազմակերպություն կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող այլ իրավաբանական անձ~~ կամ հիմնարկ, ինչպես նաեւ հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող՝ շահույթ ստանալու նպատակ հետապնդող իրավաբանական անձ.

4) **կամավոր աշխատանքի սուբյեկտ՝** Կազմակերպություն ~~կամ~~ եւ կամավոր.

5) **կամավոր աշխատանքի մասին պայմանագիր**՝ կամավորի եւ Կազմակերպության միջեւ սույն օրենքով սահմանված կարգով կամավոր աշխատանք կատարելու մասին գրավոր համաձայնություն.

6) **կամավորական ծրագիր**՝ կամավոր աշխատանքի սուբյեկտների կողմից մշակվող կամ իրականացվող, որոշակի խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների համալիր.~~÷~~

7) ակցիա՝ մեկանգամյա կամ մշտական բնույթ չկրող միջոցառում կամ գործողությունների համալիր:

Հոդված 4. Կամավոր աշխատանքի ~~հետ կապված~~ սկզբունքները

1. Կամավոր աշխատանքի ~~հետ կապված~~ սկզբունքներն են՝

1) կամավորի կամքի ազատությունը.

2) կամավոր աշխատանքի անհատուցելիությունը.

3) կամավոր աշխատանքի սուբյեկտների իրավահավասարությունը.

~~4) կամավոր աշխատանքի ընթացքում խտրականության արգելքը. Սույն կարգավորման իմաստով խտրականություն է համարվում սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնության պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների պատճառով ցանկացած ուղղակի կամ անուղղակի տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որի նպատակը կամ արդյունքը հանդիսանում է կամավոր աշխատանքի ընթացքում նվազ բարենպաստ վերաբերմունքի դրսեւորումը կամ մյուսների հետ հավասար հիմունքներով սույն օրենքով կամ այլ օրենքներով սահմանված ցանկացած իրավունքի ճանաչման կամ իրականացման արգելքը կամ ժխտումը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի տարբերակումը, բացառումը կամ սահմանափակումն օբյեկտիվորեն արդարացված են հետապնդվող իրավաչափ նպատակով, եւ այդ նպատակին հասնելու համար կիրառվող միջոցները համաչափ են ու անհրաժեշտ.~~

4) կամավոր աշխատանքում խտրականության արգելքը.

5) մարդասիրությունը.~~,~~

6) մարդու իրավունքների ու ազատությունների հարգումը.

~~6~~7) ազգային, տարածաշրջանային կամ միջազգային համագործակցությունը:

Հոդված 5. Կամավոր աշխատանքի ~~սուբյեկտների հիմնական~~ նպատակները

1. Կամավոր աշխատանքի ~~սուբյեկտների~~ հիմնական նպատակներն են՝

1) կրթական, գիտական, մշակութային, սոցիալական, առողջապահական, բնապահպանական եւ այլ հանրային նշանակության խնդիրների լուծմանն աջակցելը.

2) անձի՝ ~~սոցիալական, այդ թվում՝~~ անկախ կյանքի հմտությունների ձեռքբերմանն ու զարգացմանը, սոցիալական ներառմանը աջակցելը.

3) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) այդ վիճակից դուրս բերելուն աջակցելը.

4) անձի մասնագիտական կողմնորոշմանը կամ կարիերայի պլանավորմանը, աշխատաշուկայում մրցունակությանն ուղղված զբաղունակության կամ առանցքային (փափուկ) հմտությունների զարգացմանն աջակցելը.

5) ոչ ֆորմալ կամ ինֆորմալ կրթությամբ նոր գիտելիքներ, կարողություններ, հմտություններ ու փորձառություն ձեռք բերելուն, ինչպես նաեւ ձեռքբերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների պահպանմանն աջակցելը.

6) «Կրթություն-աշխատաշուկա» արդյունավետ փոխառնչությանը, որակյալ աշխատուժի ձեւավորմանը կամ աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը նպաստելը, ինչպես նաեւ երիտասարդներին կամ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող այլ անձանց՝ աշխատաշուկայի միտումներին ծանոթանալուն եւ աշխատաշուկայում ինտեգրվելուն աջակցելը.

7) քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, այդ թվում՝ տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների,

համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների կամ արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետեւանքների վերացման աշխատանքներին կամ փրկարարական գործողություններին կամ տուժածներին օգնություն ցուցաբերելու կամ աղետների ռիսկերի կառավարման շրջանակներում իրականացվող աշխատանքներին աջակցություն ցուցաբերելը.

8) կամավոր աշխատանքին ուղղված նախաձեռնությունները զարգացնելը կամ դրանց աջակցելը, ինչպես նաեւ կամավոր աշխատանքի մասին հանրությանն իրազեկելը կամ կամավորության մշակույթի տարածմանը նպաստելը.

9) սոցիալական պատասխանատվության կամ համերաշխության մթնոլորտի կայացմանը, ինչպես նաեւ ինքնակազմակերպվող եւ ակտիվ քաղաքացիական հասարակություն ձեւավորելուն աջակցելը.

10) հանրությանը մարդասիրական գաղափարների եւ սկզբունքների ոգով դաստիարակելը, կրթելը կամ հասարակական գործունեությանը ներգրավվելու հնարավորություն ընձեռելը կամ կամավորության սոցիալական ճանաչմանը նպաստելը.

11) անձի՝ իր գիտելիքներով, կարողություններով, հմտություններով կամ փորձառությամբ օգտակար լինելուն կամ հասարակության սոցիալ-տնտեսական կյանքին մասնակցելուն, ինչպես նաեւ մարդկային կամ սոցիալական կապիտալի ձեւավորմանը նպաստելը.

12) մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանությանը կամ դրանց մասին հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը կամ հասարակության մեջ ոչ խտրական վերաբերմունքի կամ փոխօգնության մթնոլորտի ձեւավորմանը նպաստելը.

13) պետական կամ հանրային միջոցառումների անցկացմանն աջակցելը.

14) մասնակցային կառավարման, այդ թվում՝ ընտրական գործընթացներին մասնակցության մշակույթի զարգացմանը նպաստելը:

2. Կամավոր աշխատանքը կարող է կատարվել նաեւ սույն հոդվածի 1-ին մասով չսահմանված եւ օրենքով չարգելված այլ նպատակներով:

Հոդված 6. Կամավոր աշխատանքի ~~հետ կապված~~ սահմանափակումներն ու առանձնահատկությունները

~~1. Հատուկ՝ նեղ մասնագիտական գիտելիքներ պահանջող բնագավառում կամավոր աշխատանք կարող է կատարվել միայն՝ այդ աշխատանքի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող համապատասխան լիցենզիա կամ կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին փաստաթուղթ ունենալու դեպքում:~~

1. Հատուկ՝ նեղ մասնագիտական գիտելիքներ պահանջող բնագավառում կամավոր աշխատանք կարող է կատարվել մասնագիտական գործունեության կամ աշխատանքի համապատասխան գիտելիքների առկայության դեպքում՝ պահպանելով օրենքով նախատեսված սահմանափակումներն ու առանձնահատկությունները:

2. Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու կամավորությունը, օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով առանց վարձատրության աշխատանքները սույն օրենքի իմաստով չեն համարվում կամավոր աշխատանքներ:

3. Ընտանեկան կամ ազգակցական հարաբերությունների հիման վրա օգնություն ցուցաբերելու նպատակով կատարվող աշխատանքները սույն օրենքի իմաստով չեն համարվում կամավոր աշխատանքներ:

4. Հայաստանի Հանրապետությունում կամավոր աշխատանք կարող է կատարել տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր ~~անձ~~որ:

5. Մինչեւ տասնչորս տարեկան անձինք ~~կարող են ներգրավվել կամավոր աշխատանքներում~~ կամավոր աշխատանքներում կարող են ներգրավվել ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի կամ խնամակալության եւ հոգաբարձության մարմնի, իսկ տասնչորսից մինչեւ տասնվեց

տարեկան անձինք՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ:

6. Հղի կանայք, մինչեւ երեք տարեկան երեխա խնամող անձինք, ինչպես նաեւ մինչեւ տասնութ տարեկան անձինք կամավոր աշխատանքի կարող են ներգրավվել՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ եւ այլ օրենքներով սահմանված սահմանափակումներին ու առանձնահատկություններին համապատասխան:

7. Եթե բժշկական եզրակացությամբ հաստատվում է, որ կամավոր աշխատանքը վտանգել է կամ կարող է վտանգել կամավորի առողջությունը, ապա Կազմակերպությունը նրան պարտավոր է տեղափոխել միայն իր առողջական վիճակին համապատասխան այլ կամավոր աշխատանքների՝ առկայության դեպքում~~, եւ չներգրավել կամավոր աշխատանքի, եթե այլ կամավոր աշխատանք առկա չէ~~:

8. Առանց սույն օրենքով սահմանված կարգով կնքվող կամավոր աշխատանքի մասին պայմանագրի Կազմակերպության կողմից կամավոր աշխատանքի ներգրավվելու դեպքում, Հայաստանի Հանրապետության քաղաքացին, օտարերկրյա քաղաքացին, քաղաքացիություն չունեցող անձն այդ աշխատանքի մասով չի համարվում կամավոր, իսկ տվյալ աշխատանքը Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի իմաստով համարվում է անօրինական:

~~9. Սույն օրենքով սահմանված կարգով կատարված կամավոր աշխատանքի ժամանակահատվածը կամավորի համար համարվում է աշխատանքային փորձառություն:~~

9. Սույն օրենքով սահմանված կարգով կատարված կամավոր աշխատանքի ժամանակահատվածը Կազմակերպության կողմից տրամադրված տեղեկանքի կամ երաշխավորագրի հիման վրա կամավորի համար կարող է համարվել աշխատանքային փորձառություն: Կամավոր աշխատանքի մասին տեղեկանքի կամ երաշխավորագրի տրամադրման կարգը սահմանում է սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով նշված լիազոր մարմինը:

10. Աշխատանքային հարաբերությունների շրջանակներում աշխատողն իր աշխատաժամանակի ընթացքում սույն օրենքով սահմանված կարգով կամավոր աշխատանքի է ներգրավվում գործատուի հետ փոխադարձ համաձայնությամբ:

ԳԼՈՒԽ 2

ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ~~ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՆԳՍՏԻ~~ ԿԱՄԱՎՈՐԻ ՀԱՆԳՍՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱԽՍԵՐԸ

Հոդված 7. Կամավորի իրավունքները

1. Կամավորն իրավունք ունի՝

1) Կազմակերպությունից ստանալու կամավոր աշխատանքի կատարման համար անհրաժեշտ տեղեկատվություն, խորհրդատվություն կամ աջակցություն.

2) Կազմակերպության հետ փոխադարձ համաձայնությամբ մասնակցելու Կազմակերպության՝ կամավորական կամ այլ ծրագրերի մշակմանը կամ իրականացմանը.

3) սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում եւ կարգով Կազմակերպությունից ստանալու կամավոր աշխատանքի կատարման համար անհրաժեշտ միջոցներ, իր կատարած կամավոր աշխատանքից բխող լրացուցիչ ծախսերի փոխհատուցում, ինչպես նաեւ սույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում եւ կարգով ծախսերի հատուցում.

4) ստանալու վնասի հատուցում.

5) կողմերի համաձայնությամբ մասնակցելու Կազմակերպության կազմակերպած ծրագրերին եւ ~~կրթական ծրագրերին կամ իրազեկման այլ~~ միջոցառումներին.

6) Կազմակերպությունից ստանալու իր կատարած կամավոր աշխատանքի մասին տեղեկանք կամ երաշխավորագիր՝ Կազմակերպությանը գրավոր դիմելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում.

7) կամավոր աշխատանքի մասին պայմանագրով նախատեսված դեպքերում եւ կարգով ունենալու կամավոր աշխատանքի հետ կապված հնարավոր ռիսկերից ապահովագրություն.

8) ունենալու սույն օրենքով կամ այլ օրենքներով սահմանված՝ կամավոր աշխատանքի հետ կապված այլ իրավունքներ:

Հոդված 8. Կամավորի պարտականությունները

1. Կամավորը պարտավոր է՝

1) չտարածել կամ չհրապարակել կամավոր աշխատանքը կատարելու ընթացքում իրեն հայտնի դարձած անձնական տվյալների կամ պետական, բանկային, ապահովագրական, առեւտրային, բժշկական, փաստաբանական կամ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող այլ տեղեկությունները,

2) կամավոր աշխատանքը կատարել առողջության պահպանման եւ անվտանգության ապահովման վերաբերալ Հայաստանի Հանրապետության ~~նորմատիվ իրավական ակտերի~~օրենսդրության պահանջներին համապատասխան,

3) հատուցել ~~սույն հոդվածով սահմանված պարտականությունները~~կամավոր աշխատանք կատարելիս՝ իր գործողության կամ անգործության հետեւանքով Կազմակերպությանը պատճառած նյութական վնասը,

4) նպատակային ու բարեխղճորեն օգտագործել Կազմակերպության հատկացրած գույքը եւ միջոցները,

5) մասնակցել Կազմակերպության կազմակերպած՝ իր կամավոր աշխատանքին առնչվող կրթական ծրագրերին կամ իրազեկման այլ միջոցառումներին՝ տվյալ կամավոր աշխատանքը կատարելու համար պարտադիր նախապայման լինելու դեպքում,

6) կրել սույն օրենքով կամ այլ օրենքներով սահմանված՝ կամավոր աշխատանքի հետ կապված այլ պարտականություններ:

7) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով անցնել պարտադիր բժշկական զննություն, եթե կամավոր աշխատանքը կատարվելու է այնպիսի աշխատանքներում, որոնք պահանջում են նախնական եւ պարբերական բժշկական զննություն:

~~2. Անձը կամավոր դառնալուց առաջ պարտավոր է՝~~

~~1) Կազմակերպության հետ սույն օրենքով սահմանված կարգով կնքել կամավոր աշխատանքի մասին պայմանագիր,~~

~~2) Կազմակերպությանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող համապատասխան լիցենզիա կամ կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին փաստաթուղթ, եթե կամավոր աշխատանքը կատարվելու է հատուկ (նեղ մասնագիտական) գիտելիքներ պահանջող բնագավառում:~~

Հոդված 9. Կազմակերպության իրավունքները

1. Կազմակերպությունն իրավունք ունի՝

~~1) մշակելու կամ իրականացնելու կամավորական ծրագրեր կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բարեգործական ծրագրեր ինչպես ինքնուրույն, այնպես էլ կամավոր աշխատանքի այլ սուբյեկտների հետ համատեղ.~~

1) մշակելու կամ իրականացնելու կամավորական ծրագրեր.

2) սույն օրենքով սահմանված կարգով ներգրավելու կամավորներ.

3) կամավորից ստանալու տեղեկատվություն՝ կատարված կամավոր աշխատանքների վերաբերյալ.

4) լուսաբանելու իր կողմից ներգրավված կամավորների կատարած կամավոր աշխատանքների արդյունքները.

5) ապահովելու կամավորի մասնակցությունն իր կողմից իրականացվող կամավորական կամ այլ ծրագրերի մշակմանը.

6) խրախուսելու կամավորին.

7) ապահովելու կամավորի մասնակցությունն իր կազմակերպած համապատասխան կրթական ծրագրերին կամ կամավոր աշխատանքին առնչվող իրազեկման այլ միջոցառումներին՝ անհրաժեշտության դեպքում այդ նպատակով համագործակցելով ուսումնական հաստատությունների հետ,

~~7~~8) ունենալու սույն օրենքով կամ այլ օրենքներով սահմանված՝ կամավորներ ներգրավելու հետ կապված այլ իրավունքներ:

Հոդված 10. Կազմակերպության պարտականությունները

1. Կազմակերպությունը պարտավոր է՝

~~1) անձին որպես կամավոր ներգրավելուց առաջ նրա հետ կնքել կամավոր աշխատանքի մասին պայմանագիր սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով,~~

1) մինչեւ կամավոր ներգրավելը կնքել կամավոր աշխատանքի մասին պայմանագիր սույն օրենքով սահմանված կարգով.

2) կամավորին տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն կամ աջակցություն, ինչպես նաեւ նրա կամավոր աշխատանքին առնչվող տեղեկատվություն,

3) կամավոր աշխատանքի մասին պայմանագիր կնքելուց առաջ պահանջել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող համապատասխան լիցենզիա կամ կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին փաստաթուղթ, եթե կամավոր աշխատանքը կատարվելու է սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հատուկ (նեղ մասնագիտական) գիտելիքներ պահանջող բնագավառում,

4) գրավոր դիմելուց 5 աշխատանքային օրվա ընթացքում կամավորին տրամադրել տեղեկանք կամ երաշխավորագիր կատարված կամավոր աշխատանքի մասին,

~~5) ապահովել կամավորի մասնակցությունն իր կազմակերպած համապատասխան կրթական ծրագրերին կամ կամավոր աշխատանքին առնչվող իրազեկման այլ միջոցառումներին՝ անհրաժեշտության դեպքում այդ նպատակով համագործակցելով ուսումնական հաստատությունների հետ,~~

~~6~~5) ~~սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում եւ կարգով~~ տրամադրել կամավոր աշխատանքի կատարման համար անհրաժեշտ միջոցներ, փոխհատուցել կամավոր աշխատանքի ընթացքում կամավորի~~՝ այդ աշխատանքի ընթացքում~~ կատարած լրացուցիչ ծախսերը, ինչպես նաեւ սույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում ~~եւ կարգով~~ վճարել ծախսերի հատուցումը,

~~7~~6) ապահովել կամավոր աշխատանքի կատարման համար անհրաժեշտ, անվտանգ եւ առողջության համար անվնաս պայմաններ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգավորումներին համապատասխան,

~~8~~7) հաշմանդամություն ունեցող անձին որպես կամավոր ներգրավելու պարագայում՝ ապահովել ~~նաեւ կամավոր աշխատանք կատարելու համար համապատասխան պայմաններ եւ մատչելիություն~~խելամիտ հարմարեցումներ,

~~9~~8) մինչեւ կամավոր աշխատանքի թույլատրելը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան կամավորի հետ անցկացնել

առողջության պահպանման եւ աշխատանքի անվտանգության ապահովման եւ կատարվող կամավոր աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ հրահանգավորում,

~~10) կամավորին հատուցել կամավոր աշխատանքի հետ կապված պարտականությունները կատարելիս պատճառված վնասը,~~

9) հատուցել կամավոր աշխատանք կատարելիս կամավորին պատճառված վնասը,

~~11~~10) կազմակերպել եւ հսկել կամավորի կողմից կատարվող կամավոր աշխատանքները,

~~12~~11) չտարածել կամ չհրապարակել կամավորներին կամավոր աշխատանքներում ներգրավելու ընթացքում իրեն հայտնի դարձած անձնական տվյալների կամ պետական, բանկային, ապահովագրական, առեւտրային, բժշկական, փաստաբանական կամ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող այլ տեղեկությունները,

~~13~~12) կրել սույն օրենքով կամ այլ օրենքներով սահմանված՝ կամավորներ ներգրավելու հետ կապված այլ պարտականություններ:

Հոդված 11. ~~Կամավորների հանգստի~~ Կամավորի հանգստի առանձնահատկությունները

1. Կամավոր աշխատանքի ընթացքում կամավորի հանգստի կամ սնվելու համար ընդմիջումները, ամենօրյա, ամենշաբաթյա, ամենամյա անընդմեջ հանգիստը սահմանվում են կողմերի համաձայնությամբ՝ առնվազն պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համապատասխան աշխատանքի համար սահմանված հանգստի նվազագույն տեւողությունները:

Հոդված 12. Կամավոր աշխատանքի հետ կապված ծախսերը

1. Կամավոր աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ծախսերի իրականացման նպատակով կամավորին ֆինանսական կամ գույքային միջոցները տրամադրվում են նախապես՝ Կազմակերպության կողմից, իսկ կամավոր աշխատանքներից բխող լրացուցիչ ծախսերը փոխհատուցվում են այդ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում՝ այդ փաստաթղթերը ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան մինչեւ հաջորդ ամսվա 15-ը: Սույն մասում նշված լրացուցիչ ծախսերի փոխհատուցման առավելագույն չափը սահմանվում է նախապես՝ կողմերի գրավոր համաձայնությամբ:

2. Իր բնակության վայրից (քաղաք կամ գյուղ) դուրս կամավոր աշխատանք կատարելու դեպքում՝ Կազմակերպության կողմից կամավորին տրվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ֆինանսական կամ գույքային միջոցներից կամ կամավոր աշխատանքներից բխող լրացուցիչ ծախսերի փոխհատուցումից բացի նաեւ ծախսերի հատուցում՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգին եւ չափերին համապատասխան:

3. Սույն հոդվածով նախատեսված ֆինանսական միջոցները, հատուցումները կամ փոխհատուցումները կամավորին վճարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով՝ անկանխիկ եղանակով:

ԳԼՈՒԽ 3

ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Հոդված 13. Կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները

1. Կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները կողմերի փոխադարձ համաձայնության վրա հիմնված այն հարաբերություններն են, որոնք ծագում են

կամավորի եւ Կազմակերպության միջեւ սույն օրենքով սահմանված կարգով կնքված կամավոր աշխատանքի մասին պայմանագրով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հարաբերությունները համարվում են քաղաքացիական-իրավական հարաբերություններ, իսկ կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը՝ քաղաքացիական-իրավական բնույթի պայմանագիր:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հարաբերությունները չեն համարվում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային հարաբերություններ, իսկ պայմանագիրը՝ աշխատանքային պայմանագիր:

Հոդված 14. Կամավոր աշխատանքի մասին պայմանագրի կնքման կարգը

1. Կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը կնքվում է որոշակի ժամկետով:

2. Կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը՝

1) կնքվում է գրավոր ձեւով, երկու օրինակից՝ կողմերի, իսկ մինչեւ տասնչորս տարեկան անձի հետ կնքվող պայմանագրի դեպքում՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ օրինակը Կազմակերպությունը հանձնում է կամավորին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան կամավորի դեպքում՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկին կամ խնամակալին.

2) սույն մասի 1-ին կետով սահմանված կարգով կարող է կնքվել նաեւ կողմերի էլեկտրոնային ստորագրությամբ: Էլեկտրոնային ստորագրությամբ կնքված կամավոր աշխատանքի մասին պայմանագրի մեկ օրինակը էլեկտրոնային եղանակով փոխանցվում է կամավորին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան կամավորի դեպքում՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկին կամ խնամակալին:

3. Կազմակերպությունն իր՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողի հետ չի կարող կնքել նաեւ կամավոր աշխատանքի մասին պայմանագիր նույն աշխատանքի համար:

4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը՝ օտարերկրացու հետ կամավոր աշխատանքի մասին պայմանագիր կնքելու դեպքում, սահմանվում է մուտքի վիզայի ժամկետով, եթե օտարերկրացու համար Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված մուտքի վիզա:

5. Կամավոր աշխատանքի մասին պայմանագիր կնքելը պարտադիր չէ ակցիային մասնակցելու դեպքում, ինչպես նաեւ այն դեպքերում, երբ կամավոր աշխատանքը կատարվում է ոչ Կազմակերպության միջոցով:

Հոդված 15. Կամավոր աշխատանքի մասին պայմանագրի բովանդակությունը

1. Կամավոր աշխատանքի մասին պայմանագրում նշվում են՝

1) պայմանագիրը կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը,

2) պայմանագիր կնքող Կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը,

3) կամավորի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, բնակության կամ հաշվառման հասցեն,

4) կամավորի՝ անձը հաստատող փաստաթղթի վավերապայմանները, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը,

5) կամավոր աշխատանքի անվանումը կամ գործառույթները կամ նկարագրությունը,

6) կողմերի համաձայնությամբ ապահովագրություն նախատեսվելու դեպքում՝ կամավորին՝ իր կամավոր աշխատանքի հետ կապված դժբախտ դեպքերից,

մասնագիտական հիվանդություններից կամ նրա քաղաքացիական պատասխանատվությունը՝ երրորդ անձանց վնաս պատճառելու կամ այլ ռիսկի հետ կապված ապահովագրության կարգը եւ պայմանները,

7) կամավոր աշխատանքը կատարելու կարգն ու պայմանները,

8) սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի ~~8-րդ~~ 7-րդ կետով սահմանված դեպքում՝ կամավոր աշխատանք կատարելու համար ~~համապատասխան պայմանների եւ մատչելիության ապահովման~~ խելամիտ հարմարեցումների վերաբերյալ կարգավորումները, դրանց իրականացման ժամկետները,

9) պայմանագրի գործողության ժամկետը,

10) Կազմակերպության անունից պայմանագիրը ստորագրող անձի պաշտոնը, անունը, ազգանունը, կամավորի անունը, ազգանունը եւ ստորագրությունները:

2. Կամավոր աշխատանքի մասին պայմանագրում կարող են ներառվել նաեւ սույն օրենքից բխող կամ սույն օրենքին չհակասող այլ պայմաններ:

Հոդված 16. Կամավոր աշխատանքի մասին պայմանագրի պայմանների փոփոխման կամ պայմանագրի լուծման հիմքերն ու կարգը

1. Կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը լուծվում է պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում:

2. Կամավոր աշխատանքի մասին պայմանագրի պայմանները կարող են փոփոխվել կամ պայմանագիրը կարող է լուծվել նաեւ կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ առնվազն երեք աշխատանքային օր առաջ նախապես այդ մասին գրավոր տեղեկացնելով մյուս կողմին, եթե տեղեկացման այլ կարգ նախատեսված չէ կամավոր աշխատանքի մասին պայմանագրով: Սույն մասով սահմանված ծանուցման ժամկետի ավարտի օրվան հաջորդող օրվանից կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը համարվում է լուծված օրենքի ուժով:

ԳԼՈՒԽ 4

ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ՝ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Հոդված 17. Կամավոր աշխատանքի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի~~՝ օրենքով սահմանված~~ լիազոր մարմնի լիազորությունները

1. Կամավոր աշխատանքի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի՝ «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքով սահմանված լիազոր մարմնի լիազորություններն են՝

1) կամավոր աշխատանքի բնագավառի պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը.

2) կամավոր աշխատանքի բնագավառի օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակումը.

3) կամավոր աշխատանքի խթանման, ինչպես նաեւ կամավորության մշակույթի զարգացման ու տարածման վերաբերյալ առաջարկությունների, միջոցառումների մշակումը կամ իրականացման ապահովումը.

4) կամավոր աշխատանքի սուբյեկտներին տեղեկատվական, մեթոդական կամ խորհրդատվական աջակցության տրամադրումը:

Հոդված 18. Կամավոր աշխատանքի սուբյեկտների՝ կամավոր աշխատանքի հետ կապված իրավունքների պաշտպանությունը, կամավոր աշխատանքի հետ կապված վեճերի լուծումը

~~1. Կամավոր աշխատանքի սուբյեկտների՝ կամավոր աշխատանքի հետ կապված իրավունքների պաշտպանությունը, կամավոր աշխատանքի հետ կապված վեճերի լուծումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը։~~

1. Կամավոր աշխատանքի սուբյեկտների՝ կամավոր աշխատանքի հետ կապված իրավունքների պաշտպանությունը եւ կամավոր աշխատանքի հետ կապված վեճերի լուծումն իրականացվում է դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքին համապատասխան:

ԳԼՈՒԽ 5

ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդված 19. Կամավոր աշխատանքի կազմակերպումը օտարերկրյա պետություններում կամ օտարերկրյա քաղաքացիների կամավոր աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում

1. Կազմակերպությունը՝ իր նախաձեռնությամբ կամ օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության հրավերով՝ սույն օրենքով կամ այլ օրենքով սահմանված կարգով կարող է կամավորին գործուղել օտարերկրյա պետություն՝ կամավոր աշխատանք կատարելու:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում օտարերկրյա պետությունում կամավոր աշխատանքը կարգավորվում է սույն օրենքով, այլ օրենքներով, ընդունող պետության օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով եւ կամավոր աշխատանքի մասին պայմանագրով:

3. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության տարածքում սույն օրենքով սահմանված կարգով կամավոր աշխատանք կատարելու նպատակով կարող է հրավիրել օտարերկյա քաղաքացիներ՝ սույն օրենքով կամ այլ օրենքով սահմանված կարգով:

4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում՝ սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-2-րդ մասերով սահմանված միջոցները տրամադրվում կամ ծախսերը փոխահատուցվում կամ հատուցվում են կամավոր աշխատանքի մասին պայմանագրով սահմանված կարգով՝ Կազմակերպության կամ ընդունող պետության կամ միջազգային կազմակերպության միջոցների հաշվին:

5. Մինչեւ տասնչորս տարեկան անձինք Կազմակերպության միջոցով օտարերկրյա պետությունում կամավոր աշխատանքի կարող են ներգրավվել ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի կամ խնամակալության եւ հոգաբարձության մարմնի, իսկ տասնչորսից մինչեւ տասնութ տարեկան անձինք՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ եւ պատասխանատվությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լրիվ գործունակ ճանաչված (էմանսիպացված) անձանց:

ԳԼՈՒԽ 6

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

~~**Հոդված 20. Եզրափակիչ մաս**~~

~~1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից երեք ամիս հետո:~~

Հոդված 20. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն (բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերի) ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից երեք ամիս հետո:
2. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերն ուժի մեջ են մտնում՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի 9-րդ մասից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրը:
3. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված պարտադիր բժշկական զննության պարտականությունը կամավորի համար ուժի մեջ է մտնում սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Հոդված 21. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է նաեւ Կազմակերպությունների կողմից կամավորների հետ մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը կնքված՝ կամավոր աշխատանքի վերաբերյալ պայմանագրերի, ինչպես նաեւ այդ պայմանագրերից ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը կնքված կամավոր աշխատանքի վերաբերյալ պայմանագրերում նախատեսված առավել բարենպաստ կարգավորումների:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում՝ մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը կամավորների հետ կնքված կամավոր աշխատանքի վերաբերյալ պայմանագրերի համապատասխանեցումը սույն օրենքի պահանջներին Կազմակերպությունները պարտավոր են կատարել սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 9-րդ մասից եւ 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից՝ վեցամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-558-10.04.2023-ԱՍ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-558[1]-10.04.2023-ԱՍ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-558-10.04.2023-ԱՍ-011/1)					
1.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «**կամավորին կամավոր աշխատանքներում ներգրավող կազմակերպություն (սույն օրենքի իմաստով այսուհետեւ՝ Կազմակերպություն)**՝ հանրային իշխանության մարմին, այդ թվում՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ պետական կամ համայնքային ոչ առեւտրային կազմակերպություն կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող այլ իրավաբանական անձ» բառերը փոխարինել «**Կազմակերպություն՝** սույն օրենքի իմաստով կամավոր աշխատանքներում ներգրավելու	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			իրավունք ունեցող հանրային իշխանության մարմին, այդ թվում՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական կամ համայնքային ոչ առեւտրային կազմակերպություն կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող այլ իրավաբանական անձ (այդ թվում՝ հասարակական կազմակերպություն, հիմնադրամ, կուսակցություն եւ այլն)» բառերով, իսկ 4-րդ կետում՝ «կամ» բառը «և» բառով: *Սույն առաջարկները պայմանավորված են այն հանգամանքով, որ անձը կամավորի կարգավիճակ է ձեռք բերում կամավոր աշխատանքի մասին պայմանագիր կնքելու պահից սկսած: Միաժամանակ, կարգավորումների ներկայացված տարբերակն առավել համապարփակ է և հստակեցնող: Կազմակերպությունների շրջանակը փոփոխության չի ենթարկվում:*		
2.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մաս (լրացվում է նոր 7-րդ կետ)	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով. «7) **ակցիա**՝ մեկանգամյա կամ մշտական բնույթ չկրող միջոցառում կամ գործողությունների համալիր:»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
3.	Ազգային ժողովի պատգամավոր	Նախագծի 4-րդ հոդվածի վերնագիր,	Նախագծի 4-րդ հոդվածի վերնագրից և 1-ին մասից, ինչպես նաև նախագծի 6-	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

	Հերիքնազ Տիգրանյան	1-ին մաս և 6-րդ հոդված	րդ հոդվածի վերնագրից հանել «հետ կապված» բառերը: *Սույն առաջարկը խմբագրական բնույթի է և ներկայացվում է կարգավորումներն անհարկի չծանրաբեռնելու համատեքստում:*		
4.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4) կամավոր աշխատանքում խտրականության արգելքը.»: *Սույն առաջարկը ներկայացվում է խտրականության արգելքի սկզբունքն ուղղակի ամրագրելու և անհարկի կարգավորումը չծանրաբեռնելու համատեքստում:*	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
5.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	**Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-6-րդ կետեր և նոր՝ 7-րդ կետ**	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը տրոհել երկու մասի և փոխել 6-րդ կետի համարակալումը՝ դարձնելով 7-րդ: Արդյունքում կարգավորումները կլինեն հետևյալ բովանդակությամբ. «5) մարդասիրությունը. 6) մարդու իրավունքների ու ազատությունների հարգումը. 7) ազգային, տարածաշրջանային կամ միջազգային համագործակցությունը:»: *Փոփոխությունները լեզվաբանական բնույթի են, և վերը նշված տարբերակով 5-րդ և 6-րդ կետերը տարանջատված են ներկայացվում՝ հաշվի առնելով*	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			իմաստային առումով առկա տարբերությունները:		
6.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 5-րդ հոդվածի վերնագրից և 1-ին մաս	Նախագծի 5-րդ հոդվածի վերնագրից և 1-ին մասից առաջարկվում է հանել «սուբյեկտների» բառը, իսկ 1-ին մասի 2-րդ կետից՝ «սոցիալական, այդ թվում՝» բառերը: *Սույն առաջարկը «սուբյեկտների» բառը հանելու մասով ներկայացվում է՝ հիմք ընդունելով այն, որ նպատակները պետության կողմից սահմանվում են կամավոր աշխատանքի՝ որպես ինստիտուտի ձևավորման և զարգացման համար հետապնդվող նպատակ: Միաժամանակ, «սոցիալական, այդ թվում՝» բառերը հանելու առաջարկն ունի խմբագրական նշանակություն, քանի որ «անձի՝ անկախ կյանքի հմտությունների ձեռքբերմանն ու զարգացմանը, սոցիալական ներառմանը աջակցելը» կարգավորումն արդեն իսկ ենթադրում է սոցիալական ուղղվածությունը:*	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
7.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 5-րդ հոդված 1-ին մաս, նոր լրացվող 2-րդ մաս	Նախագծի 5-րդ հոդվածի վերնագրից հանել «հիմնական» բառը և նույն հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով. «2. Կամավոր աշխատանքը կարող է կատարվել նաև սույն հոդվածի 1-ին	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			մասով չսահմանված և օրենքով չարգելված այլ նպատակներով:»: *Սույն առաջարկի իրացումը փվյալ կարգավորման առարկան չի փոխում, ուղղակի առավել հստակեցնող է, քանի որ, երբ, որ նշված էր հիմնական նպատակներ, ենթադրվում էր, որ օրենքի կարգավորման ընդհանուր ցրամաբանությանը համապատասխանող նպատակներով ևս կամավոր աշխատանքների ներգրավելու հնարավորությունը տրվում էր: Այս տարբերակով առավել որոշակի է լինում, որ հիմնական նպատակից բացի նաև այլ նպատակներով, որոնք սահմանված չեն և օրենքով արգելված չեն, կարող է կամավոր աշխատանք կատարվել:*		
8.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Հատուկ՝ նեղ մասնագիտական գիտելիքներ պահանջող բնագավառում կամավոր աշխատանք կարող է կատարվել մասնագիտական գործունեության կամ աշխատանքի համապատասխան գիտելիքների առկայության դեպքում՝ պահպանելով օրենքով նախատեսված սահմանափակումներն ու առանձնահատկությունները:»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			Սույն առաջարկի իրացումը փվյալ կարգավորման առարկան չի փոխում, քանի որ, եթե օրենքով որևէ աշխատանքի համար սահմանված է, որ այն կարող է կատարել միայն համապատասխան որակավորում ունեցող անձը, ապա կամավոր աշխատանքի համար անհրաժեշտ համապատասխան գիտելիքների առկայության դեպքում՝ նման որակավորում ունենալու հետ կապված սահմանափակումները կամ առանձնահատկությունները կկարգավորվեն՝ համապատասխան ոլորտային օրենքների ընդհանուր կարգավորումների համատեքստում:		
9.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «անձ» բառը փոխարինել «ոք» բառով: *Սույն առաջարկը հստակեցնող է, որպեսզի կարգավորումը չնույնացվի նաև իրավանբանական անձի հետ:*	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
10.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 6-րդ հոդվածի 5-րդ մաս	Նախագծի 6-րդ հոդվածի 5-րդ մասի «կարող են ներգրավվել կամավոր աշխատանքներում» բառերը փոխարնել «կամավոր աշխատանքներում կարող են ներգրավվել» բառերով: *Առաջարկը լեզվաբանական բնույթի է:*	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
11.	Ազգային ժողովի պատգամավոր	Նախագծի 6-րդ հոդվածի 7-րդ մաս	Նախագծի 6-րդ հոդվածի 7-րդ մասի «, և չներգրավել կամավոր աշխատանքի,	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

	Հերիքնազ Տիգրանյան		եթե այլ կամավոր աշխատանք առկա չէ» *բառերը հանել:* *Սույն առաջարկն անհարկի կարգավորումը չծանրաբեռնելու համատեքստում է ներկայացվում, քանի որ, արդեն իսկ ենթադրվում է, որ եթե առկա չլինի այլ կամավոր աշխատանք, որին կարող են տվյալ անձին ներգրավել և որը չի վնասի վերջինիս առողջությունը, ապա չեն ներգրավի:*		
12.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 6-րդ հոդվածի 9-րդ մաս	Նախագծի 6-րդ հոդվածի 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «9. Սույն օրենքով սահմանված կարգով կատարված կամավոր աշխատանքի ժամանակահատվածը Կազմակերպության կողմից տրամադրված տեղեկանքի կամ երաշխավորագրի հիման վրա կամավորի համար կարող է համարվել աշխատանքային փորձառություն: Կամավոր աշխատանքի մասին տեղեկանքի կամ երաշխավորագրի տրամադրման կարգը սահմանում է սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով նշված լիազոր մարմինը:»:	**Ընդունվել է:** Նման կարգավորում հավանության է արժանացել նաև Կառավարության 06.04.2023 նիստի ընթացքում նախագծի փաթեթի ներկայացման ժամանակ, և որպես Կառավարության առաջարկ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան մինչև նախագծերի փաթեթի առաջին ընթերցմամբ	**Ընդունվել է:**

				ընդունումը, ներկայացվել է ԱԺ (տե՛ս Կառավարության 04.05.2023-ի առաջարկների 1-ին կետը): Տարբերությունն ուղղակի կայանում է նրանում, որ նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի փոխարեն համապատասխան լրացում կատարվում է նախագծի 6-րդ հոդվածում՝ խմբագրելով 9-րդ մասի կարգավորումը: Ըստ էության այս փոփոխությունը՝ Կառավարության «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան մինչև նախագծերի փաթեթի առաջին ընթերցմամբ	

				ընդունումը ԱԺ ներկայացված տարբերակի համեմատ բովանդակային առումով տարբերվում է նրանով, որ կարգը սահմանելու լիազորությունը տրվելու է լիազոր մարմնին (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը)՝ առավել ճկուն կարգավորումներ նախատեսելու համատեքստում:	
13.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 6-րդ հոդված, նոր 10-րդ մաս	Նախագծի 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով. «10. Աշխատանքային հարաբերությունների շրջանակներում աշխատողն իր աշխատաժամանակի ընթացքում սույն օրենքով սահմանված կարգով կամավոր աշխատանքի է ներգրավվում գործատուի հետ փոխադարձ համաձայնությամբ:»: *Սույն առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ շատ*	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			երկրներում կազմակերպությունները կամավորության մասնակից են դառնում՝ իրենց աշխատողներին կամավոր աշխատանքներ կատարելու թույլատրություն տալով և այդպիսով իրացնում են իրենց սոցիալական կորպորատիվ պատասխանատվությունը: Հետևաբար, առաջարկն իրացնելու արդյունքում, աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող այն անձանց, ում գործատուները դեմ չեն լինի, որպեսզի իրենց աշխատողներն աշխատաժամանակի ընթացքում կամավոր աշխատանքներ կատարեն, նման հնարավորություն կտրվի օրենքով:		
14.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 2-րդ գլխի վերնագիր, 11-րդ հոդված	Նախագծի 2-րդ գլխի վերնագրի «ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՆԳՍՏԻ» բառերը փոխարինել «ԿԱՄԱՎՈՐԻ ՀԱՆԳՍՏԻ» բառերով, իսկ նախագծի 11-րդ հոդվածի վերնագրում «Կամավորների հանգստի» բառերը՝ «Կամավորի հանգստի» բառերով: *Առաջարկը խմբագրական բնույթի է:*	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
15.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «մասնակցելու» բառից առաջ լրացնել «կողմերի համաձայնությամբ» բառերով, իսկ «կրթական ծրագրերին կամ	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			իրազեկման այլ» բառերը փոխարինել «ծրագրերին և» բառերով: *Սույն առաջարկը ներկայացվում է, որպեսզի անհիմն չսահմանափակվի կամավորի մասնակցությունը կազմակերպության գործունեությանը, բացի այդ, կրթական ծրագրին և իրազեկման միջոցառմանը մասնակցելը սահմանված է որպես կամավորի պարտականություն: Միաժամանակ, այն նախատեսվում է կողմերի համաձայնությամբ, քանի որ կազմակերպությունը կարող է իրականացնել նաև այնպիսի ծրագրեր, որոնք կամավորության հետ կապ չունեն և նպատակահարմար չէ, որպեսզի տվյալ անձն այդ ծրագրերից կամ միջոցառումներից տեղյակ լինել:*		
16.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետեր, նոր 7-րդ կետ	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի՝ ա. 2-րդ կետում «նորմատիվ իրավական ակտերի» բառերը փոխարինել «օրենսդրության» բառով: *Առաջարկը խմբագրական բնույթի է:* բ. 3-րդ կետում «սույն հոդվածով սահմանված պարտականությունները» բառերը փոխարինել «կամավոր աշխատանք» բառերով: *Առաջարկը խմբագրական բնույթի է:* գ. 4-րդ կետը «հատկացրած» բառից հետո լրացնել «գույքը և» բառերով,	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			Առաջարկը խմբագրական բնույթի է: Նման կարգավորում ունենք նախատեսված նաև նախագծի 12-րդ հոդվածում: դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով. «7) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով անցնել պարտադիր բժշկական զննություն, եթե կամավոր աշխատանքը կատարվելու է այնպիսի աշխատանքներում, որոնք պահանջում են նախնական և պարբերական բժշկական զննություն:»: *Կարգավորումն ունի կանխարգելիչ նշանակություն: Նման կարգավորումներ Աշխատանքային օրենսգրքով (249-րդ հոդված) սահմանված են, օրինակ, աշխատանքային հարաբերությունների շրջանակներում աշխատողների համար: Միաժամանակ, Կառավարության 27.03.2003 N 347-Ն որոշմամբ սահմանված է պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննության ենթակա մասնագիտությունների, աշխատանքների ցանկը, ինչպես նաև բժշկական զննության անցկացման կարգը: Այս մասով, նախատեսվում է նախագծի ընդունումից հետո*		

			համապատասխան ընթացակարգով փոփոխություն անել նաև նշված որոշման մեջ՝ կամավորների մասով համապատասխան լրացումներն ապահովելու համար:		
17.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասը հանել: *Սույն առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ պայմանագիր կնքելը կազմակերպության պարտականությունն է, մյուս կողմից՝ եթե անձը չներկայացնի հատուկ ոլորտի վերաբերյալ փաստաթղթեր, ապա պայմանագիր չի կնքվի: Հետևաբար, այն կարող է և չնախատեսվել օրենքում:*	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
18.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 7-րդ կետեր, 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-13-րդ (լրամշակված տարբերակում 5-12-րդ) կետեր, 15-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ	Նախագծի 9-րդ հոդվածի՝ ա. 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) մշակելու կամ իրականացնելու կամավորական ծրագրեր.»: *Առաջարկը խմբագրական բնույթի է և բովանդակային փոփոխություններ չի ենթադրում, քանի որ այսպես, թե այնպես ենթադրվում է, որ կազմակերպությունն ազատ է կամավորական ծրագրեր մշակելու ինչպես ինքնուրույն, այնպես էլ կամավոր աշխատանքի այլ սուբյեկտների հետ համատեղ, իսկ բարեգործական ծրագրերի*	**Ընդունվել է:** Սույն կետի «բ» ենթակետով առաջարկի համատեքստում նաև փոփոխվել է նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-13-րդ (լրամշակված տարբերակում 5-12-րդ) կետերի համարակալումները, ինչպես նաև նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասի	**Ընդունվել է:**

			իրականացման մասով կարգավորումներ արդեն իսկ նախատեսված են ՀՀ բարեգործության մասին օրենսդրությամբ: *բ.* 1-ին մասի 7-րդ կետի համարակալումը դարձնել 8-րդ և լրացնել հետևյալ բովանդակությամբ կետ՝ համարակալելով այն՝ որպես 7-րդ. «7) ապահովելու կամավորի մասնակցությունն իր կազմակերպած համապատասխան կրթական ծրագրերին կամ կամավոր աշխատանքին առնչվող իրազեկման այլ միջոցառումներին՝ անհրաժեշտության դեպքում այդ նպատակով համագործակցելով ուսումնական հաստատությունների հետ.»: *Սույն կարգավորումը տեղափոխվել է Կազմակերպության պարտականություններից (10-րդ հոդվածի առաջին ընթերցմամբ ընդունված տարբերակի 5-րդ կետ)՝ ամրագրվելով որպես իրավունք: Նպատակն առավել մեղմ կարգավորումներ նախատեսելը և կազմակերպությունների վրա լրացուցիչ ֆինանսական ծանրաբեռնվածություն չառաջացնելու միտումն է՝ հաշվի առնելով նաև այն, որ ոչ բոլոր*	8-րդ կետում «8-րդ» բառը փոխարինվել է «7-րդ» բառով:	

			աշխատանքների համար է, որ հարկավոր կլինի կրթական ծրագրեր իրականացնել կամ ոչ բոլոր դեպքերում է, որ կազմակերպությունը միջոցներ կունենա նման ծրագրեր իրականացնելու համար:		
19.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 5-րդ կետ, լրամշակված տարբերակում 5-րդ (առաջին ընթերցմամբ ընդունված տարբերակում 6-րդ) կետ, լրամշակված տարբերակում 9-րդ (առաջին ընթերցմամբ ընդունված տարբերակում 10-րդ) կետ	Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի՝ ա. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) մինչև կամավոր ներգրավելը կնքել կամավոր աշխատանքի մասին պայմանագիր սույն օրենքով սահմանված կարգով.»: *Սույն առաջարկը խմբագրական բնույթի է և բովանդակային փոփոխություն չի ենթադրում:* բ. առաջին ընթերցմամբ ընդունված տարբերակի 5-րդ կետը հանել: *Սույն կարգավորումը տեղափոխվել է Կազմակերպության պարտականություններից՝ ամրագրվելով որպես իրավունք, որն իրացվել է 9-րդ հոդվածի 1-ին մասում, որպես 7-րդ կետով լրացում:* գ. լրամշակված տարբերակում 5-րդ (առաջին ընթերցմամբ ընդունված տարբերակում 6-րդ) կետի «սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում և կարգով», «՝	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			այդ աշխատանքի ընթացքում», «և կարգով» բառերը հանել: *Սույն առաջարկը ներկայացվում է կարգավորումները չծանրաբեռնելու և ավելորդ հղումներ չկիրառելու համատեքստում: Մյուս կողմից, ճկունություն է ապահովվում, որ կամավոր աշխատանքի մասին պայմանագրով հնարավոր է առավել բարենպաստ պայմաններ առաջարկվել, քան նախատեսվում է օրենքի 12-րդ հոդվածով:* *գ.* լրամշակված տարբերակում 9-րդ (առաջին ընթերցմամբ ընդունված տարբերակում 10-րդ) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «9) հատուցել կամավոր աշխատանք կատարելիս կամավորին պատճառված վնասը,»: *Սույն առաջարկը խմբագրական բնույթի է:*		
20.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 14-րդ հոդվածի 3-րդ մաս	Նախագծի 14-րդ հոդվածի 3-րդ մասի «պայմանագիր» բառից հետո լրացնել «նույն աշխատանքի համար» բառերով: *Սույն առաջարկի իրացումն ունի ինչպես հստակեցնող նշանակություն, այնպես էլ՝ ճկունություն է ապահովում այն դեպքերի համար, երբ աշխատողը ցանկանա հանրօգուտ աշխատանքների մասնակցել իր*	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			գործատու կազմակերպության հետ համագործակցելով: Միաժամանակ, նախատեսվում է, որ նույն աշխատանքի համար չկնքվի կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը՝ չարաշահումներից խուսափելու համատեքստում:		
21.	Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 14-րդ հոդված, նոր 5-րդ մաս, ինչպես նաև նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի նոր 7-րդ կետ	Նախագծի 14-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով. «5. Կամավոր աշխատանքի մասին պայմանագիր կնքելը պարտադիր չէ ակցիային մասնակցելու դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ կամավոր աշխատանքը կատարվում է ոչ Կազմակերպության միջոցով:»: *Սույն առաջարկությունը ներկայացվում է կամավորությունն անհարկի չխոչընդոտելու, առանց կազմակերպությունների հետ համագործակցելու՝ ինքնուրույն կամավոր աշխատանք կատարելու համար անհատներին ևս հնարավորություն ընձեռելու, ակցիաների կազմակերպման համար մեծ թվաքանակով կամավոր աշխատանք կատարելու անհրաժեշտության դեպքերում առավել մեղմ՝ առանց պայմանագրերի, կարգավորումներ նախատեսելու*	**Ընդունվել է:** Առաջարկի իրացումը նպատակ է հետապնդում չխոչընդոտել և չճնշել կամավոր աշխատանքի ինքնաբուխ դրսևորումները և հնարավորություն ընձեռել անկանխատեսելի իրավիճակներում կամ միանգամյա, ոչ մշտական բնույթի միջոցառումներում (ակցիաներում) մեծաքանակ կամավորների մասնակցությամբ միջոցառումների իրականացման համար:	**Ընդունվել է:**

			հնարավորություն ընձեռելու համատեքստում: Արդյունքում, կամավոր չհանդիսացող անձին մեկանգամյա և մշտական բնույթ չկրող գործողության կամ միջոցառման (ակցիայի) ներգրավելու դեպքում, ինչպես նաև ինքնուրույն՝ առանց Կազմակերպության, կամավոր աշխատանքներ կատարելու դեպքում կամավոր աշխատանքի մասին պայմանագիր կնքելը պարտադիր չի լինի: **Վերը նշվածի համատեքստում էլ նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկվել է լրացնել 7-րդ կետ, որով կսահմանվի ակցիայի հասկացությունը (տե՛ս սույն ամփոփաթերթի 2-րդ կետով ներկայացված առաջարկությունը):**	Նման փորձառության օրինակ է կորոնավիրուսի տարածմամամբ պայմանավորված ՀՀ-ում 2020 թվականի մարտի 16-ից հայտարարված արտակարգ դրությամբ, ինչպես նաև սեպտեմբերի 27-ից՝ հայտարարված ռազմական դրությամբ ստեղծված սոցիալական ծանր իրավիճակի մեղմման և աջակցության տրամադրման հարցում կամավորների միջոցով կատարվող հսկայածավալ աշխատանքն ու ինքնաբուխ, ինքնակազմակերպվող խմբերի միջոցով կամավոր աշխատանքների կատարման պրակտիկան,	

				միաժամանակ, պետական մարմիններում կամ կազմակերպություններում կամ հիվանդանոցներում մեծաքանակ կամավորների ներգրավման անհրաժեշտությունը: Նշված սկզբունքը (կամավոր աշխատանքի ինքնաբուխ դրսևորումները չսահմանափակելու, անհատական նախաձեռնությունները չխոչընդոտելու) խրախուսվում է նաև միջազգային պրակտիկայում (Միացյալ ազգերի կազմակերպություն, Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Եվրոմիություն):	
22.	Ազգային ժողովի պատգամավոր	Նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

	Հերիքնազ Տիգրանյան		«1. Կամավոր աշխատանքի սուբյեկտների՝ կամավոր աշխատանքի հետ կապված իրավունքների պաշտպանությունը և կամավոր աշխատանքի հետ կապված վեճերի լուծումն իրականացվում է դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքին համապատասխան:»: *Առաջարկի իրացումը կարգավորումն առավել համապարփակ տեսքով կներկայացնի, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգը, ենթադրում է իր մեջ նաև նույն օրենսգրքով սահմանված գործերի ենթակայության հետ կապված կարգավորումները:*		
2 3.	Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան	**Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի լրամշակված տարբերակում 7-րդ (առաջին ընթերցմամբ ընդունված տարբերակում 8-րդ), 15-րդ հոդվածի**	Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի լրամշակված տարբերակում 7-րդ (առաջին ընթերցմամբ ընդունված տարբերակում 8-րդ) կետի «նաև կամավոր աշխատանք կատարելու համար համապատասխան պայմաններ և մատչելիություն» բառերը փոխարինել «խելամիտ հարմարեցումներ» բառերով: Միաժամանակ, առաջարկվում է նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասի 8-	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

		1-ին մասի 8-րդ կետեր	րդ կետում ևս համապատասխան փոփոխություններ անել և «համապատասխան պայմանների եւ մատչելիության ապահովման» բառերը փոխարինել «խելամիտ հարմարեցումների» բառերով: *Առաջարկությունները ներկայացվում են ներկայիս օրենսդրական կարգավորումներին համապատասխան եզրույթներ կիրառելու համատեքստում: Համանման կարգավորումներ առկա են նաև Աշխատանքային օրենսգրքում:*		
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ					
1.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	**Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հանել «սույն մասի 2-րդ կետով սահմանված անձանց կողմից» բառերը:** *Սույն առաջարկությունը ներկայացվում է հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նախագծի 14-րդ հոդվածում կատարվող 5-րդ մասով լրացման արդյունքում անհրաժեշտություն է առաջանում համապատասխան փոփոխություն կատարել նաև «կամավոր աշխատանքի» հասկացության սահմանման մեջ:*	**Ընդունվել է:** *Սույն առաջարկի ներկայացնումը պայմանավորված է հետևյալ հանգամանքով. Կամավոր աշխատանքի ինքնաբուխ դրսևորումները չխոչընդոտելու և անկանխատեսելի իրավիճակներում կամ միանգամյա, ոչ մշտական բնույթի միջոցառումներում*	**Ընդունվել է:**

				(ակցիաներում) մեծաքանակ կամավորների մասնակցությամբ միջոցառումների իրականացման համար հնարավորություն ընձեռելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել խմբագրել նաև «կամավոր աշխատանքի» հասկացության սահմանումը, և կամավոր աշխատանքը չկապել միայն կամավորի կարգավիճակ ունեցող անձի կողմից կատարվող աշխատանքի հետ: Առաջարկվող փոփոխության արդյունքում կնախատեսվի ուղղակի, որ կամավոր աշխատանք է համարվելու	

				կամավորության վրա հիմնված, հանրօգուտ, անվարձահատույց, ոչ պարտադիր կամ ոչ հարկադիր, նախագծով առաջարկվող օրենքին համապատասխան կատարվող աշխատանքը:	
2.	Կառավարություն	**Նախագծի 17-րդ հոդվածի վերնագիր, 1-ին մաս**	Նախագծի 17-րդ հոդվածում առաջարկվում է՝ 1) վերնագրից հանել «օրենքով սահմանված» բառերը, 2) 1-ին մասի «օրենքով» բառից առաջ լրացնել ««Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին»» բառերով: *Սույն կետի առաջարկները ներկայացվում են՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջն այն համատեքստում, որպեսզի հղումը համապատասխան օրենքին հստակ նշվի:*	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
3.	Կառավարություն	**Նախագծի 19-րդ հոդվածի 4-րդ մաս**	Նախագծի 19-րդ հոդվածի 4-րդ մասում «հատուցվում են» բառերից հետո լրացնել «կամավոր աշխատանքի	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			մասին պայմանագրով սահմանված կարգով՝» բառերով: *Սույն առաջարկն ունի հստակեցնող և որոշակիացնող նշանակություն, որի իրացման արդյունքում՝ առանձին դեպքերում կամավոր աշխատանքի մասին պայմանագրերով կնախատեսվեն, թե ոնց և ում միջոցների հաշվին են օտարերկրյա գործուղումների դեպքերում կատարվելու կամավորների ծախսերի հատուցումները:*		
4.	Կառավարություն	**Նախագծի 20-րդ և 21-րդ հոդվածներ**	**Սույն ամփոփաթերթում ընդունված առաջարկությունների իրացման արդյունքում, Նախագծի 20-րդ և 21-րդ հոդվածներում ևս անհրաժեշտ է կատարել որոշակի փոփոխություններ, մասնավորապես՝** **1. Նախագծի 20-րդ հոդվածն առաջարկվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ.** «**Հոդված 20. Եզրափակիչ մաս** 1. Սույն օրենքն (բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերի) ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից երեք ամիս հետո: 2. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերն ուժի մեջ են մտնում՝ սույն	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			օրենքի 6-րդ հոդվածի 9-րդ մասից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրը: 3. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված պարտադիր բժշկական զննության պարտականությունը կամավորի համար ուժի մեջ է մտնում սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրը:»: 2. **Նախագծի 21-րդ հոդվածն առաջարկվում է լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.** «3. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 9-րդ մասից և 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից՝ վեցամսյա ժամկետում:»:		
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-558[1]-10.04.2023-ԱՍ-011/1)					
1.	Կառավարություն	**Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետ**	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետն առաջարկվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ.	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			«1. վերնագրում և 1-ին մասում «իր աշխատողի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ օրենքով սահմանված կազմակերպությունը՝ իր կողմից օրենքով սահմանված կարգով կամավոր աշխատանքի ներգրավված կամավորի» բառերով: *Առաջարկը չընդունելու պարագայում կստացվեր, որ Քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածում կատարվող լրացման քաղաքացին էլ է հանդիսանալու կամավոր աշխատանքում կամավոր ներգրավելու իրավասություն ունեցող անձ, ինչը կհակասի «Կամավոր աշխատանքի մասին» օրենքի կարգավորումներին: Նշվածով պայմանավորված է ներկայացվում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետը լրամշակելու սույն առաջարկությունը:*		